ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/3760 «04» 12 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/12» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ծառայությունները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Բ. Արամյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 16-ը, ժամը 10:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014թ. դեկտեմբերի 16-ին, ժամը 10:00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԾՁԲ-15/12»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Բ. Արամյան
հեռ. 514-194